

Է. Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Իմաստաբանությունը լեզվաբանության այն ճյուղն է, որտեղ մինչև այժմ կան բազմաթիվ բարդ ու չլուծված պրոբլեմներ, տարբեր, հաճախ իրար հակասող տեսակետներ:

Անցյալ դարի 80-ական թվականներին, երբ իմաստաբանությունը նոր էր ինքնուրույնություն ձեռք բերել, նրանում գերիշխում էր տրամաբանական ուղղությունը, որի հետևորդները (Հ. Պաուլ և ուրիշներ) իմաստային փոփոխությունների հիմքում դնելով տրամաբանության օրենքները, այսպես էին դասակարգում իմաստաբանական պրոցեսները.

1. Բառիմաստի նեղացում:

2. Բառիմաստի լայնացում:

3. Բառիմաստի փոխարինում ըստ նմանության, ժամանակի ու տարածության առնչությունների և այլն:

4. Այլ դեպքեր, որոնք տարբեր հեղինակների մոտ տարբեր ձևով են բացատրվել բառիմաստի «լավացում» ու «վատացում», չափազանցում (հիպերբոլ) ու լիտոտա, լավասություն (էվֆեմիզմ) ու թաբու և այլն:

Ավելի ուշ ծագած հոգեբանական վոլյունտարիստական ուղղության ներկայացուցիչների (Վ. Վունդտ և այլք) համար բառիմաստի փոփոխության օրենքներ դարձան զուգորդության օրենքները, ուստի նրանց մշակած իմաստափոխությունների դասակարգումը հետևյալ պատկերն ունի.

1. Իմաստի կանոնավոր (ընդհանուր) փոփոխություններ.

ա) առնմանական

բ) բարդացական

գ) զգացական

դ) իմաստի զուգորդական խտացում

2. Իմաստի եզակի (մասնակի) փոփոխություններ.

ա) անվանում մասնակի զուգորդությամբ,

բ) անվանման մասնակի փոխաբերում,

գ) փոխաբերության տարբեր տեսակներ:

Հետագայում տարածում են գտել այնպիսի ուղղություններ, որոնք բառիմաստի ուսումնասիրման և իմաստափոխությունների դասակարգման հարցում առաջնակարգ տեղ են հատկացրել ծագումնաբանական-էմպիրիկ (Օ. Վելյանդեր), կուլտուր-պատմական (Հ. Շուխարդտ), էմոցիոնալ (Հ. Շպերբեր) մոմենտներին և այլն: Որոշ լեզվաբաններ աշխատում են էկլեկտիկորեն զուգորդել գոյություն ունեցող տարբեր տեսակետները (Գ. Ստեռն), մյուսները իմաստաբանությունը դուրս են բերում լեզվաբանական գիտությունների շարքից, այն հանձնելով հոգեբանության ոլորտին (Զ. Հոմբոլդ), երրորդներն էլ նրան համապարփակ բնույթ են վերագրում, ձգտելով ստեղծել պանխրոնիկ

լեզվաբանություն և սեմանտիկան դարձնել մնացած բոլոր լեզվաբանական գիտությունների ընդհանրական հիմնաքարը (Ստ. Ուլման)։

Մի շարք գիտնականներ (Յ. Տրիր, Վ. Պորցիգ) այլ սկզբունքներով են մոտեցել բառերի իմաստների բնույթի ու փոխհարաբերության բացահայտմանը, փորձելով դրանք ներկայացնել «իմաստաբանական դաշտերի» ձևով։

* *

Ինչպե՞ս են լուծվել իմաստաբանական հարցերը սովետական լեզվաբանության մեջ։ Կանգ չառնելով առանձին հեղինակների իմաստաբանական հետազոտությունների վրա, նշենք սովետական լեզվաբանության մեջ տրագիցիոն ձևով ընդունված բառիմաստի փոփոխությունները։

ա) Բառիմաստի ընդլայնում. բառը սկզբում ունեցել է կոնկրետ իմաստ. իսկ հետագայում տարածվել է ուրիշ առարկաների ու երևույթների վրա և ստացել ավելի ընդարձակ, ընդհանուր իմաստ։ Օրինակ, հիմֆ (նախապես միայն գործվածքի, հետո տան, շենքի հիմք, մինչև այժմյան լայն նշանակությունը), սուր (հնում միայն հատուկ, հետագայում նաև զենք), краска (красный բառից), чернила (черный բառից), հուն. trapeza «սեղան» բառը ծագումով նշանակում էր եռոտանի սեղան։

Բառիմաստի ընդլայնման տիպիկ օրինակ են հանդիսանում հասարակ դարձող հատուկ անունները, ինչպես՝ կայսր, վոլտ, ամպեր, դոմոնան, մեկենաս, դոմկիսոտ և այլն։ Այս կարգին է պատկանում նաև նյութի անվան գործածությունը՝ նույն նյութից պատրաստած առարկայի անվան նշանակությունում։ Օրինակ, պղինձ՝ մետաղ և դրանից պատրաստած կաթսա, ոսկի՝ մետաղ և դրամ, նույնը՝ արծաթ և այլն։ Ինչպես և երբ հատուկ անունները գործ են ածվում, ասենք, ծաղիկներ անվանելու համար՝ ռուս. Иван-да-Марья, василек, маргаритка.

բ) Բառիմաստի նեղացում. ընդհանուր իմաստ ունեցող բառը հետագայում ստանում է ավելի նեղ, մասնավոր իմաստ։ Օրինակ՝ հավ (հնում թռչուն, որի լայն իմաստից մնացել է հավք), ռուս. пиво (пить բառից, նշանակել է ընդհանրապես խմիչք), коса, որը սլավոնական լեզուների մեծ մասում նշանակել է հյուս, իսկ սերբերենում՝ և՛ հյուս, և՛ մազեր, բուլղարերեն միայն մազեր։ Բառիմաստի նեղացում է տեղի ունեցել նաև որպես հատուկ անուններ գործածվող հասարակ անուններում՝ Աստղիկ, Գոհար, Մանուկ, Գալուստ, Թագուհի և այլն։

Հաճախ բառը ծագման տեսակետից պարունակում է մեկ կամ սահմանափակ թվով հատկանիշներ, մինչդեռ ավելի շատ է նկատի ունեցվում։ Օրինակ՝ столяр (գերմ. Tischler), փականագործ՝ слесарь (գերմ. Schlosser)։

Շատ դեպքերում փոքրանում է բառի գործածման ծավալը և սահմանափակվում է այն առարկաների ու երևույթների շրջանակը, որ բառը անվանում է։ Ինչպես՝ գրաբ. հոտ, հին ռուս. стадо, նշանակել են նաև մարդկանց հասարակական խմբավորում, сосуд նաև՝ զենք։ Կերակրել այժմ կարելի է ասել և մարդու, և կենդանու վերաբերյալ, իսկ կեր՝ միայն կենդանու կերի մասին, մարդունը՝ ուտելիք (բայց նաև՝ կերակուր), նույնը նաև ռուս. кормить—корм—пища. կամ наказание (հին ռուս. նաև наставление, որտեղից՝ наказ), աշխատություն, հնում նաև շարժարանք, մորթել՝ նաև քերթել, լրաբեր 9—2

ինչպես և ռուս. труд (շարշարանք), часть (участь), хоронить (прятать) նման դեպքերում հին նշանակությունը երբեմն մնում է, երբեմն՝ վերանում:

գ) Բառիմաստի շրջում, երբ բառը փոխում է իր իմաստը: Օրինակ՝ անագին հնում նշանակել է ահեղ, սարսափելի, այժմ՝ հսկա, մեծ: Ապրել՝ գրաբ. ազատվել (փորձանքից), ապրանք՝ ազատում, ինչպես և ապրուստ, իսկ այժմ՝ կյանք ունենալ, բնակվել և այլն: Դաչա (առաջ՝ որևէ ծառայության համար տրված կալվածք, այժմ՝ ամառանոց), стрелок առաջ՝ նետաձիգ, այժմ՝ հրաձիգ և այլն:

Բառի նշանակությունը կարող է փոխվել այնքան, մինչև վերածվի լրիվ հակառակ իմաստի: Պարապել բառը գրաբ. դատարկել, պարպել, զբաղմունք չունենալ, ազատ լինել է նշանակել: Իսկ հետագայում՝ մի բանով զբաղվել, գործ կատարել: Այսպես է և անգլիս. և թանկագին, և գին չունեցող, ռուս. бесценный, прослушать (և՛ լսել, և՛ բաց թողնել, չլսել), пресловутый (առաջ՝ փառաբանված, այժմ՝ տխրահռչակ) և այլն:

Իսկ իմաստափոխության պատճառները հետևյալներն են.

Իմաստափոխություն կցորդական զուգորդությամբ, որը կոչվում է փոխանունություն (метонимия): Այստեղ մի առարկայի անվան փոխարինումը մյուսով հիմնվում է նրանց միջև եղած կապի, առնչության վրա: Օրինակ՝ լսաբան, դասաբան, ռուս. кабинет (և՛ սենյակը, և՛ մարդիկ), բյուրո: Հետաքրքրական է վերջին բառի պատմությունը². այն ծագում է ֆր. bureau բառից, որ սկզբնապես նշանակել է «ուղտի բրդից պատրաստած կտոր», հետո այն սեղանը, որ ծածկված է այդ կտորով, ապա այն սենյակը, ուր կան նման սեղաններ, հիմնարկության բաժինը (մեքենագրական բյուրո, կոնստրուկտորական բյուրո), այդտեղ աշխատող մարդիկ և վերջապես այդ մարդկանց նիստը:

Փոխանունությունը կարող է արտահայտել նաև երևույթի ու նրա ստեղծողի, տիրոջ կապը. Թումանյան եմ կարդում, Կոմիտաս է լսում: Կամ անվանել մասը՝ ամբողջի փոխարեն (երբեմն էլ հակառակը), պարունակողը՝ պարունակչալի, եզակի թիվը հոգնակիի փոխարեն, հիշատակել առարկայի միայն հատկանիշը և այլն: Օրինակ. մարդ պետք է խելքով գործ անի, երկու շրջ դատարկեց: Դործողության, զգացմունքների փոխարեն կարող են հիշատակվել սոսկ նրանց արտաքին նշանը, միջոցը կամ արդյունքը: Օրինակ՝ մատը մատին չխփել (գործ չանել), հոնքերը կիտել (մոռյվել), զենքերը վայր դնել (խոստովանել պարտությունը):

Իմաստափոխություն նմանական զուգորդությամբ՝ փոխաբերություն (метафора). սա լեզվի՝ բառային նոր նշանակություններով հարստանալու ամենատարածված միջոցն է և բազմապիսի տեսակներ ունի: Օրինակ՝ աստղերի քարավաններ, քնքուշ լարեր, քաղցր ժպիտ, դառը խոսքեր, եղնիկն իրեն տեսավ ջրի հայելում, սարի գագաթ, գավի վիզ, մատանու, աղբյուրի ակ և այլն: Կամ ռուս. нос корабля, поля шляпы, поля тетради, кузнечик ձայնի նմանողությամբ՝ փոքր դարբին (հմմտ. ֆր. la sauterelle (ծղրիդ), sauter ցատկոտել բառից ցատկոտող)³:

Փոխաբերության ակունքները թաքնված են մարդկանց հնագույն մտածողության մեջ, երբ բնության երևույթները շնչավորվել, մարդկային գծեր են.

¹ է. Բ. Աղաջան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1963, էջ 268.

² А. А. Реформатский, Введение в языкознание, М., 1955, стр. 53.

³ Л. А. Булаховский, Введение в языкознание, М., 1954, стр. 58.

ստացել, այլ խոսքով՝ անձնավորվել են⁴։ Օրինակ՝ փշում է քամին, անձրևը ծեծում է կտուրը, լույսը բացվեց, մութն ընկավ, արևը դուրս է գալիս, մայր է մտնում (հմտ. ոռւս. համանման արտահայտությունների հետ)։

Սակայն այժմ էլ այդ երևույթի հիման վրա փոխաբերություններ են կազմվում՝ սիրտը կոտրեց, սիրտը նեղացավ, ոռւս. часы идут, дыхание обрывается և այլն։

Բառի նախնական իմաստը հետագայում հաճախ բոլորովին մթագնվում է և չի գիտակցվում։ Ինչպես մառդ բառում, որ նախապես նշանակել է մահկանացու։ Կին բառը տարբեր լեզուներում ունեցել է տարբեր իմաստներ՝ լատ. femina նշանակել է սնուցող, հին-հնդկ. stri՝ արտադրող, հուն. potina՝ տնտեսուհի, լատ. mulier՝ նուրբ, գերմ. weib՝ տքնող և այլն։

Հաճախ էլ առարկայի կամ երևույթի հին անվանումը անցնում է նորերին ըստ այն ֆունկցիայի, որ նրանք ձեռք են բերել հետագայում։ Դեղ (հնում՝ խոտ, բույս), ոռւս. nepo, գերմ. Feder, ֆր. plume (բոլորը՝ փետուր-գրիչ)։ Նավ բառը սկզբնապես գործ է ածվել՝ մեջը փորած մի գերան անվանելու համար. հետագայում այն կատարելագործվել է մինչև ներկայիս մեծ, տեխնիկայի վերջին խոսքով պատրաստած նավերը, սակայն բառը, անունը նույնն է մնացել։ Այսպես և սնգլերեն sail-ը ծագում է sail՝ լաստ բառից և նշանակել է միայն լողալ լաստանավով, իսկ այժմ ընդհանրապես նավով գնալ։ Car բառը նույնպես փոխել է իր իմաստը, տեխնիկայի զարգացմանը զուգընթաց, քառանիվ սայլից մինչև այժմյան արագընթաց ավտոմեքենաները։ Նավատորմ բառը սկզբում հավաքական իմաստ է ունեցել միայն նավերի համար, իսկ հետո անցել է նաև օդանավերին՝ ծովային նավատորմ, օդային նավատորմ։

Իմաստափոխություններ կարող են տեղի ունենալ տնտեսական հարաբերությունների հիման վրա։ Հաճախ առևտրի մեջ գործածվող առարկաների անունները փոխում են իրենց իմաստը և ստանում «դրամի» իմաստ։ Օրինակ՝ լատ. pecunia՝ անասուն և դրամ, վերը նշված մետաղների անունների գործածությունը դրամի իմաստով (բազմաթիվ լեզուներում), իռլ. cumal «ստրկուհի», հետագայում՝ դրամ։ Ֆր. merci (լատ. mercēre՝ վաճառել, ֆր. commerce վաճառք) բառը այսպիսի պատմություն ունի՝ երբ մեկը վաճառել է իր ապրանքը, սեղմել է գնորդի ձեռքը և ասել՝ merci՝ վաճառեցի. սովորությունը վերացել է, իսկ բառը մնացել է և իմաստափոխված ձևով անցել կենցաղի մեջ։

Բառերը իմաստափոխվում են նաև հասարակական վերաբերմունքի պատճառով։ Խուժան բառը, օրինակ՝ խուժիստանցիներ անվանումից, որպես զավթող, ավազակ. կամ ֆր. villain սկզբում նշանակել է գյուղացի, ֆեոդալիզմի ժամանակ՝ «վատ, անարգ» և այդ վերջին իմաստով էլ մնացել է լեզվում։

Իմաստափոխություն կարող է տեղի ունենալ լեզվական ձևերի քարացման հետևանքով։ Օրինակ՝ հապս՝ գրբ. հասանել բայի ապառնի եզ. 3-րդ դեմք, այժմ ունի ինքնուրույն իմաստ. կամ իրավ, իրո՛ւ՝ գրբ. «իր» բառի գործ. եզ. և հոգն., նաև կենաց՝ գրաբ. կյանք բառի հոգն. սեռ., այժմ անկախ բառեր են⁵։

Շատ են այնպիսի զուգորդություններն ու իմաստափոխությունները,

⁴ Է. Ջրբաշյան, Գրականության տեսություն, Երևան, 1962, էջ 214։

⁵ Է. Բ. Աղաջան, Հնդկարանության ներածություն, Երևան, 1963, էջ 271։

որոնք ընդհանուր են բազմաթիվ լեզուների համար: Օրինակ՝ գույն արտահայտող բառերը ըստ այն առարկաների, որոնց համար հատկանշական է այդ գույնը: Հմմտ. հայ. նարնջագույն, շագանակագույն, մոխրագույն, մանուշակագույն, երկնագույն, ռուս. коричневый, фиалковый, каштановый, фишашковый, оранжевый, малиновый, *ինչպես* և ֆր. orange, անգլ. orange. իտ. aranciato բոլորն էլ նարինջ բառից, ֆր. lilas, անգլ. lilac՝ յասաման բառից, ֆր. framboise՝ հատապտուղի (մոշ) անվանումից և այլն:

Բերված օրինակները բավական պարզ և ակնառու են: Սակայն լեզվում միշտ չէ, որ այդպես է: Պատահական չէ, որ Մ. Աբեղյանը նշում է. «Շատ անգամ դժվար է որոշել, թե բառի սկզբնական կամ իսկական նշանակությունը որն է, և թե ինչպիսի զուգորդություններով բառը նորանոր նշանակություններ է ստանում, որովհետև միևնույն բառը կարող է բազմազան կերպով անցնել մի նշանակությունից մյուսին, մերթ նշանակության լայնացումով, մերթ նեղացումով, մերթ նմանական, մերթ որևէ կցորդական զուգորդություններով»⁶։ Որպես օրինակ քննենք զլուխ բառի տարբերակները. 1) մարդու մարմնի վերին մաս, 2) այդ մասը որպես հաշվի միավոր (50 զլուխ ոչխար), 3) մտավոր ընդունակություններ (լավ զլուխ ունի), 4) գրքի, աշխատության մաս (վեպը բաղկացած է հինգ զլխից) և նրա հետ առնչվող բառակապակցությունները՝ զլուխ տանել, զլուխը ցավացնել, զլխին նստել, զլուխն ուտել, զլխի ընկնել, զլխի գցել, ոտքից զլուխ, մի զլուխ բարձր լինել, զլուխն ազատել, զլխով անել և այլն. այդպես և ռուսերենում՝ забрать себе в голову, задурить голову, в первую голову, намылить голову, как снег на голову, вскружить голову, сломя голову, очертя голову, быть на голову выше, с головы до ног. *Ինչպես տեսնում ենք* բառի իմաստի զարգացմանը մասնակցել են և՛ փոխաբերությունն ու փոխանունությունը, և՛ իմաստի լայնացումն ու նեղացումը, և՛ բազմապիսի զուգորդություններ:

* * *

Ինչպես տեսնում ենք, իմաստաբանությունն իր ողջ ուշադրությունը կենտրոնացնում էր իմաստային ընդհանրությունների և բառիմաստի այն փոփոխությունների վրա, որոնք կատարվում են բազմապիսի զուգորդությունների հիման վրա: Սակայն նշված ընդհանուր մոմենտներն ու զուգորդական կապերը կարող են նյութ տալ խոսքի հոգեբանությանն ու խոսքի պատմությանը, իսկ նրանց տարբեր արտացոլումը լեզուներում հնարավորություն է տալիս ոչ միայն պարզաբանել կոնկրետ լեզուների ինքնատիպ հատկանիշները, այլև իմաստաբանական երևույթների բնույթը ընդհանուր տուժամբ: Եվ ընդհանրապես, իմաստաբանական երևույթների հետազոտման համար ավելի կարևոր է ոչ թե գտնել նրանց ընդհանուր մոմենտները, որոնք պայմանավորված են կոլլտուր-պատմական պայմանների նմանությամբ կամ հոգեբանական պրոցեսների բնույթի միասնությամբ, այլ այդ ընդհանուր մոմենտների նկատմամբ կոնկրետ լեզվական կառուցվածքների ցուցաբերած ռեակցիաների տարբերությունը՝ մի հարց, որ դեռևս բավարար չափով չի ուսումնասիրված:

Ուստի և վերջին տարիներին լայն լայն հետաքրքրություն է առաջացրել լեզվաբանների շրջանում, և մասնավորապես սովետական լեզվաբանության

⁶ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 150:

մեջ: Վ. Զվեգինցեր, օրինակ, որը առանձին գիրք է նվիրել իմաստաբանությանը⁷, նշում է, որ իմաստաբանության հետազոտման օբյեկտը պետք է լինի ոչ թե լեզվական նշանակությունն ընդհանրապես, այլ բառային (լեքսիկական) նշանակությունը, որպես օբյեկտիվորեն գոյություն ունեցող լեզվական երևույթ:

Լեզուների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նրանք դանազանվում են ոչ միայն իրենց «արտաքին», այլև «ներքին» տվյալներով, որը իր արտահայտությունն է գտնում ինչպես լեզուների քերականական, այնպես էլ նրանց բառային կազմի իմաստային կառուցվածքում: Մեծ են այդ ներքին տարբերությունները նույնիսկ ամենամոտ լազգակցական կապեր ունեցող լեզուներում: Այսպես, տրամադրություն և փաշություն, ինչպես և ռուս. настроение и мужество բառերը գերմաներենում արտահայտվում են միևնույն Mut բառով, ընդ որում առաջինները դառնում են նրա լայն նշանակությունը, երկրորդները՝ նեղը, իսկ դրան համապատասխան անգլ. mood-ը ունի միայն լայն նշանակությունը՝ տրամադրություն, հոգեկան վիճակ: Բսկ դերմ. die See և das Meer թե՛ հայերենում, թե՛ ռուսերենում արտահայտվում են մեկ բառով՝ ծով և море.

Իր ռուս-ֆրանսերեն բառարանի նախաբանում ակադ. Լ. Վ. Շչերբան ակնառու կերպով ցույց է տվել, որ տարբեր լեզուների համապատասխան բառերի նշանակությունները չեն համընկնում միմյանց: Նա բերում է ռուս. хороший, хорошенький, красивый, прекрасный, превосходный և ֆր. bon, joli, beau, exellant ածականների օրինակը: Ակադ. Շչերբան գրում է. «Մի լեզվի բառերը մեծ մասամբ ոչ թե պարզապես համընկնում են մյուսի բառերին, այլ գտնվում են բավական բարդ ու բազմակողմանի հարաբերությունների մեջ»:

Իսկ դա նշանակում է, որ բառի իմաստը արտահայտում է լեզվի «ներքին» կողմը և լեզվի որակական բնութագրման ամենակարևոր մոմենտներից մեկն է: Լեզվի այդ «ներքին» կողմը կազմում են լեզվական նշանակությունները, որոնք երեք կարգի են. հնչյունային, քերականական և լեքսիկական. սրանք երեքն էլ օժտված լինելով մեկ ընդհանրությամբ՝ լեզվական ֆունկցիայով, որոշակիորեն տարբերվում են միմյանցից. քերականական նշանակությունները հարաբերվում են նաև տրամաբանական երևույթների հետ, իսկ լեքսիկական նշանակությունները՝ և տրամաբանական երևույթների և օբյեկտիվ իրականության հետ:

Այսպիսով, լեքսիկական նշանակությունը մի կողմից ուղղված է դեպի առարկաների որոշակի մի դասի (որոնցից յուրաքանչյուրը նա կարող է նշանակել, անվանել), մյուս կողմից հիմնվում է յուրաքանչյուր առանձին առարկայի ընդհանրացված ու վերացական իմացության վրա, որի հիման վրա այդ առանձին առարկաները միավորվում են տվյալ բառով անվանվող ընդհանուր դասի մեջ: Լեքսիկական նշանակության ընդհանրացումը (տրամաբանական մոմենտ) առարկայորեն կողմնորոշված է (խոսքը չի վերաբերում այն բառերին, որոնք անվանում են ընդհանուր տրամաբանական հասկացություններ):

⁷ В. А. Звегинцев, Семаснология, Москва, 1957.

Բառի առարկայական-տրամաբանական հարաբերումը չի ընդգրկում բառի նշանակությունը, ուստի դրանք չի կարելի նույնացնել: Միևնույն առարկայական-տրամաբանական բովանդակությունը կարելի է արտահայտել տարբեր լեզուների բառերով, կամ միևնույն լեզվում՝ տարբեր միջոցներով. Ծրբ դիտում ենք մեծ, հսկայական, ահագին, ահռելի կամ ուսերեն БОЛЬШОЙ, громадный, великий, колоссальный հոմանիշները, համոզվում ենք, որ նրանք վերաբերում են մեկ հասկացության, բայց ունեն տարբեր նշանակություններ: Կարելի է ասել մեծ գիտնական, խոսքի մեծ վարպետ, բայց չի կարելի ասել հսկայական գիտնական (մինչդեռ ռուս. великий художник, писатель և այլն):

Հետևաբար, բառի հետ կապված հասկացության ձևավորումը ընթանում է լեզվի հիման վրա, ֆունկցիոնալ գործոնի ազդեցությամբ, որը առաջանում և պայմանավորվում է որոշակի լեքսիկական սիստեմի մասերի՝ լեքսիկական միավորների ներքին փոխհարաբերությամբ, իսկ վերջինս փոխվում է մի լեզվից մյուսը և դրանով տարբերություններ մտցնում նաև նրանց լեքսիկական միավորների մեջ:

Այսպիսով, բառի իմաստը զարգանում է հետևյալ գործոնների փոխազդեցության պայմաններում՝ ա) բառի հարաբերումը առարկաների որոշակի դասի հետ, բ) բառի կապը որոշակի հասկացության՝ տրամաբանական կատեգորիայի հետ, գ) ֆունկցիոնալ գործոն՝ բառի կախվածությունը լեզվական սիստեմից:

Չի՝ կարելի ասել, թե այս երեք գործոններից որն է ավելի կամ պակաս կարևոր, նրանց երեքի գոյությունը պարտադիր է բառի լեքսիկական նշանակությունը որոշելու համար: Եթե նկատի ունենանք, օրինակ, միայն առարկայական հարաբերումը, ապա բառի իմաստային կառուցվածքը տրոհվում է մի քանի ինքնուրույն, իրար հետ կապ չունեցող «նշանակությունների», որոնց ներքին կապն ու փոխհարաբերությունը չի դրսևորվում: Այդպիսին է լինում երբեմն պատկերը համառոտ բառարաններում, որտեղ բառից հետո պարզապես հաջորդաբար տրվում են նրա տարբեր իմաստների բացատրությունները, առանց որևէ կապ հաստատելու վերջիններիս միջև: Նման բացատրությունները, իհարկե, օգնում են թարգմանության ժամանակ՝ ըստ բառի ընդհանուր իմաստի կարելի է ընտրել դրանցից որևէ մեկը: Իսկ այդ ընդհանուր իմաստը որոշվում է հաջորդ երկու գործոններով:

Ինչպես նշում է Լ. Ա. Բուլախովսկին, մարդկային լեզվում հասկացությունների վերարտադրումը բառերով, ընդհանրապես, միատարր, զուգահեռ պրոցես չէ, երբեք չի կարելի ենթադրել, թե լեզվում հենց այնքան բառ կա, որքան հասկացություն: Չխոսելով այն մասին, որ վերջիններից բացի բառերը կարող են արտահայտել նաև զգացմունքներ, չի կարելի մոռանալ, որ հաճախ նրանք հասկացություններն էլ արտահայտում են ոչ ճիշտ ու կայուն ձևով: Ուրիշ խոսքով, բառի «նշանակության» հետ համընկնող հասկացության բարձր մշակվածությունը կարելի է տեսնել միայն մաքուր տերմիններում՝ սինուս, կոսինուս, վոլտ, ամպեր, ռադիում, ֆերում և այլն, որոնք ունեն մեկ միասնական հարաբերվածություն, և մնացած գործոնները կարևոր դեր չեն կատարում: Իսկ սովորական բառերում պատկերը բոլորովին այլ է: Օրինակ՝

ամուր բառը ունի հետևյալ տարբերակները՝ 1) պինդ, հաստատուն (ամուր պատ, շինություն), 2) ուռղջ, ուժեղ (ամուր օրգանիզմ, ջղեր, բազուկներ), 3) անսասան, անփոփոխ (ամուր կամք), 4) հաստատ, հիմնավոր (ամուր հող)։ Ռուսերեն համապատասխան крепкий բառի որոշ տարբերակներ համընկնում են հայերենին. օրինակ՝ крепкая веревка, дерево; крепкий организм, нервы, крепкий дух, крепкая воля։ Սակայն ուս. крепкий ветер, мороз, крепкий чай, раствор, запах հայերենում պահանջում են բոլորովին այլ բառեր՝ խիստ սառնամանիք, ուժեղ քամի, թունդ թեյ, լուծույթ, ուժեղ հոտ. ամուր հողը ռուսերեն կլինի твердая почва։ Իսկ անգլերենն, օրինակ, նույն իմաստներն արտահայտելու համար ունի երկու զանազան բառեր՝ firm ground (ամուր հող), a firm hope, faith (հաստատ հույս, հավատ), firm treatment (խիստ վերաբերմունք), strong arms (ամուր բազուկներ), strong constitution (օրգանիզմ, կառուցվածք), a strong wall (ամուր պատ), strong tea, coffee, a strong smell (թունդ թեյ, սուրճ, ուժեղ հոտ), strong remedies (ուժեղ դեղ)։ Այսպիսով, յուրաքանչյուր լեզվի համապատասխան բառերը կապված են տարբեր հասկացությունների հետ։

Երրորդ, ֆունկցիոնալ մոմենտի բացակայության վերաբերյալ ակադ. Շչերբան գրել է, որ բառարանագիրների սկզբունքային սխալն այն է, որ նրանք ենթադրում են, թե լեզուների յուրաքանչյուր զույգում սխտեմները միմյանց համարժեք են, մինչդեռ յուրաքանչյուր կոնկրետ լեզու բնութագրվում է իր լեքսիկական միավորների յուրահատուկ, բնորոշ իմաստային հարաբերությունների սխտեմով։ Նա բերում է հետևյալ օրինակը. ֆրանս.— ուս. բառարանում նշված է, որ brasser նշանակում է խառնել (mешать, размешивать), և եթե մեկը լիովին առաջնորդվի բառարանով, կարող է այս բառն օգտագործել թեյը խառնել, խաղաթղթերը խառնել կապակցություններում, մինչդեռ ֆրանսերենում այդ սխալ կլինի, կարելի է ասել brasser des affaires (գործեր կատարել), brasser une intrigue (ինտրիգներ սարքել) և այլն։ Կամ lacté բացատրված է կաթնային, մինչդեռ այդ բառը գործածվում է la diète lactée, le régime lacté ձևերում և չի կարելի ասել, օրինակ՝ nourriture lactée (այլ՝ la nourriture laitière—կաթնեղեն կերակուր)։

Իսկ նման վրիպումներից խուսափելու համար պետք է իմանալ նաև, թե ինչպես են լեզվում իրականացվում բազմիմաստ բառի բարդ իմաստային կառուցվածքի առանձին օղակները, որտեղ մեծ դեր է խաղում նշված ֆունկցիոնալ մոմենտը։

Լեզվում առարկայական-տրամաբանական տարրերը կարող են հաստատվել տարբեր ձևերով՝ առանձին լեքսիկական միավորներով, բառաստեղծմամբ, եղած բառի իմաստափոխությամբ կամ օտար լեզվի բառերի փոխառությամբ։ Եվ յուրաքանչյուր անգամ, երբ նոր հասկացության համար նոր բառ է ստեղծվում, այն իսկույն ևեթ իմաստային հարաբերությունների մեջ է մտնում մյուս բառերի հետ, ձեռք բերում տվյալ լեզվին հատուկ բնորոշ գծեր և ստանում որոշակի լեքսիկական նշանակություն։ Օր. ֆր. volontaire բառը համարյա միաժամանակ փոխ է առնվել ռուսերենի կողմից՝ волонтер, անգլ. volunteer և գերմ. der Volontär «որևէ գործում կամավոր մասնակցող մարդ»

⁹ Л. В. Щербан. Опыт общей теории лексикографии, Изв. АН СССР, ОЛЯ, 1940, вып. 3, стр. 113.

ընդհանուր իմաստով, սակայն վերջիններում այն ստացել է տարբեր նշանակություններ, որոնք չի կարելի միմյանց հետ համընկնող համարել. ուստի պատերազմում կամավոր մասնակցող մարդ, պարտիզան, գերմ. արտադրության մեջ անվճար աշխատող մարդ և որպես ռազմական տերմին, անգլ.՝ կյանքի համար վտանգավոր աշխատանքում մասնակցող մարդ։ Այդպես և միջազգային շատ բառեր՝ կլիմա, պիոներ, ինդուստրիա, էներգիա, մինիստր և այլն, որոնք ա՛րցուցի համարվում են համազոր։

Զուտ լեզվական տեսակետից բառի նշանակությունը որոշվում է մյուս բառերի հետ նրա պոտենցիալ. հնարավոր կապակցություններով, որոնք կազմում են բառի այսպես կոչված լեքսիկական համարժեքությունը։ Այդպիսի պոտենցիալ հնարավոր կապակցությունների ամբողջությունը իրականում պայմանավորում է բառի, որպես լեզվի սիստեմի օբյեկտիվորեն գոյություն ունեցող երևույթի կամ փաստի, լեքսիկական նշանակությունը։ Պոտենցիալ տիպային կապակցությունները, որոնք տարբեր կողմերից են բնութագրում մեկ ընդհանրացմամբ պայմանավորված միասնական իմաստային ամբողջությունը և կազմում են բառի լեքսիկական նշանակությունը, կարող են կոչվել բառի միասնական նշանակության բառա-իմաստային տարբերակներ (պրոֆ. Ա. Սմիռնիցկու տերմինն է)։ Այսինքն, բառի նշանակությունը նրա բառա-իմաստային տարբերակների ամբողջությունն է։

Բառերի հսկայական մեծամասնության համար հատկանշական է, որ նրանց բառա-իմաստային տարբերակները զարգացման բարդ ուղի են անցնում, հարստանում են նրանց կապակցություններն ու դարձվածաբանական ձևերը, հաճախ տեղի է ունենում բառի իմաստային կենտրոնի տեղափոխում։

Սեղան բառը, օրինակ, որը հայերենին է անցել պարսկերենից (շ. Աճառյան, Արմատական բառարան՝ շիրան «թագավորական սեղան»), սկզբնապես գործածվել է մեծ մասամբ ճաշի սեղան և՛ կերակուր, հացկերույր, հրավեր՝ իմաստներով, ինչպես և որպես բարձր տեղ, որի վրա որևէ գործ են կատարում՝ զոհասեղան, տաճարի սեղան. «ծամող ատամը» անվանվել է սեղանատամ։ Այժմ էլ սեղանը գործ է ածվում ոչ միայն ուտելիք դնելու, այլև զանազան ուրիշ նպատակներով, ուստի ճաշասեղան բառի, սեղան բացել, սեղան գցել և նման կապակցությունների կողքին ունենք նաև գրասեղան, խաղասեղան և այլն։

Ռուս. стол սկզբում նշանակել է ընդհանրապես այն տեղը, ուր ուտելիք է դրվել (расстилались еда), հետո՝ բարձր տեղ, որ ավելի հարմար է ուտելիք դնելու համար։ Այս վերջին՝ բարձր լինելու հատկանիշից զարգացել են столы-ник և столный град ձևերը. այսինքն, նախապես բարձր լինելու իմաստն է որոշել բառի զարգացումը։ Հետագայում այն փոխվել է, երբ հատուկ կահույք է ստեղծվել ուտելիք դնելու համար, որը ևս կոչվել է стол, և այժմ սովորական լեզվագիտակցությունը միմյանց հետ չի կապում стол և столица, столный город բառերը։ Առաջին պլան է մղվել սեղանի՝ «ուտելիք դնելու տեղ» հատկանիշը, որտեղից ծագել են диетический стол, сытный стол, квартира со столом և այլն։ Իսկ ավելի ուշ, զարգացումը նոր ուղիով է ընթացել, համա. кухонный стол, теннисный стол, письменный стол, рабочий стол և փաթեթերական՝ адресный стол, стол заказов և այլն։

Գերմ. Tisch բառը այլ իմաստարանական զարգացում է ունեցել։ Այն գերմաներենին է փոխանցվել հունարենից (discos—նետելու սկավառակ), լատ.

տիներենի միջոցով (discus — ափսե, պնակ): Հին-գերմ. Tisch-ը պահպանել է լատիներեն նշանակությունը, բայց գործ է ածվել նաև սեղան իմաստով, որովհետև այդ շրջանում սեղանը իրենից ներկայացրել է մի փոքրիկ կլոր փայտե տախտակ, որը հատուկ հենարանի վրա դրվել է յուրաքանչյուր ուտողի առջև և ծառայել է նաև որպես ափսե: Հետագայում անվանումը անցել է կահույքի այն տեսակին, որը օգտագործվել է ուտելիք դնելու համար: Ավելի ուշ, Tisch-ը նշանակել է և՛ ուտելիք, և՛ սեղան, ինչպես և սեղանների տարբեր տեսակներ՝ Arbeitstisch, Eßtisch, Schreibtisch, Spieltisch և այլն:

Ուրիշ ձևով է ընթացել անգլ. table բառի իմաստային զարգացումը: Այն փոխ է առնվել լատիներենից (tabula), ֆրանսերենի միջոցով և նշանակել է փայտից, քարից կամ մետաղից պատրաստած տախտակ կամ սկավառակ, հետագայում՝ գրերով տախտակ: Միայն միջին անգլերենում այն նշանակել է հենարանով հարթ տախտակ, որի վրա դրվում են զանազան իրեր, ինչպես և ուտելիք, որից հետո այն կոչվել է սեղան, կերակուր: Աստիճանաբար ստեղծվել և գործ են ածվել billiard-table, card-table, dressing-table: Բայց, ի տարբերություն նշված մյուս լեզուների, table-ը պահպանել է իր նախնական՝ «գրերով տախտակ» իմաստը, դեռ ավելին, զարգացրել է այն, նշանակելով ոչ միայն տախտակը, այլև այն, ինչ դրված է նրա վրա: Այստեղից՝ the Lord's Tables — աստծու պատվիրանները, The Twelve Tables — 12 կանոնները (հռոմեական օրենքի), tables of weights and measures — չափ ու կշիռների աղյուսակ:

* * *

Ելնելով վերը նշվածներից, հարց է ծագում, կարելի՞ է արդյոք որոշակի օրինաչափություններ բացահայտել բառի լեքսիկական նշանակության զարգացման պրոցեսներում: Այս հարցին տարբեր լեզվաբաններ, հոգեբաններ ու փիլիսոփաներ տարբեր պատասխան են տալիս: Ա. Մեյեն, օրինակ, գտնում է, որ սեմանտիկ օրինաչափություններ սահմանելը անհնարին է, քանի որ յուրաքանչյուր բառ զարգանում է իր անհատական ուղիով, և կարելի է միայն ուսումնասիրել առանձին բառի իմաստային զարգացման տենդենցները: Մոտավորապես նույն կարծիքն են հայտնել Մ. Բրեալը, Հ. Շուխարդտը, Լ. Վայսհերբերը, Լ. Շպիտցերը: Հակառակ տեսակետն ունեն այնպիսի լեզվաբաններ, ինչպես Օ. Ծսպերսենը, է. Վելլանդերը, ովս լեզվաբաններից՝ Ա. Պոտերյան և Մ. Պոկրովսկին:

Այժմ, սակայն, լեզվաբանների մեծ մասի կողմից ընդունված է, որ բոլոր լեզուներում գոյություն ունեն սեմանտիկորեն իրար հետ կապված լեզվական խմբեր, որոնց ծագումը կապված է լեզվի ընդհանրացնող բնույթի հետ. դրա հետևանքով լեզվի յուրաքանչյուր նոր բառ, ստեղծվելով, անմիջապես ինքը ընդհանրացնում է առարկաների մի որոշ դաս և սկսում է մասնակցել ընդհանրացման հետագա պրոցեսներին: Այսինքն, ինչպես Վ. Զվեգինցեն է բնորոշում, բառերը խմբավորվում և դասավորվում են բառա-իմաստային սիստեմների մեջ: Բառերի համախմբումը, ըստ նրանց իմաստային ընդհանրության սկզբունքի, տարբեր ձևով է իրականացվում: Այն մի ձևով է հանդես գալիս կապույտ, կանաչ, կաւմիր, սև և նման բառերում, որոնք ընդհանրացվում են գույն բառով: Ծիշտ այսպես, կազնի, սոճի, լորենի, խրճճորենի և այլն կարծես թե հանդիսանում են ծառ բառի արտահայտած ընդ-

հանուր հասկացության առանձին ենթախմբերը: Այլ սկզբունքներով են ընդհանրացվում, ասենք, աղգակցական կապեր, մարմնի մասեր արտահայտող բառերը և այլն: Եվ միշտ չէ, որ լեզվում այսպիսի խմբավորումների համար ընդհանրացնող բառ է լինում: Օրինակ՝ կառուցել, պատրաստել, սառնել, շինել և այլն շարքի համար դժվար է գտնել մի բառ, որը կարողսունա փոխարինել նրանց բոլորին: Սիստեմների կառուցվածքը, այսպիսով, կարող է շատ բազմազան լինել: Դրա հետ կապված, փոփոխվում է լեզվում նրանց ունեցած դերը և ավելի բարձր աբստրակցիայի անցնելու նրանց կարողությունը: Տարբեր լեզուներ ունեն բառա-իմաստային սիստեմների ոչ նույնատեսակ կառուցվածք, նույնիսկ բացարձակապես միօրինակ երևույթների ու առարկաների համար: Եվ նույնիսկ առանձին բառերը տարբեր լեզուներում գրանցում են նույն առարկայի կամ երևույթի տարբեր հատկանիշները, դեռ ավելին, այդ հատկանիշների տարբեր քանակները: Այդ պատճառով մարդկային մտածողության ընդհանրացնող ու դասակարգող աշխատանքը իրագործվում է տարբեր բառային նյութի հիման վրա ու ստեղծում է սիստեմներ, որոնք տարբեր ձևով են բնութագրում նույնանման առարկաները: Այս էլ լեզուներում առաջացնում է տարբեր բառա-իմաստային սիստեմներ՝ տարատեսակ ներքին բաժանումներով:

Գործնական կյանքի պահանջները պայմանավորում են տարբեր չափով ստորաբաժանված սիստեմների ստեղծումը առանձին երևույթների ու առարկաների համար: Դրա հետևանքով ստեղծվում են ընդհանրության ամենատարբեր հատկանիշներ, որոնք չափազանց բարդ ու հաճախ բավականին խճճված հարաբերություններ են ստեղծում ոչ միայն տարբեր սիստեմների, այլ նույնիսկ միևնույն սիստեմի բառերի միջև: Բացի այդ, սիստեմի մեջ մտնող բառերը իրենց անհատական նշանակություններով պայմանավորում են ողջ սիստեմի իմաստային զարգացման ուղղությունը, այդ երկուսի միջև գոյություն ունի փոխադարձ համաձայնություն, որի հետևանքով յուրաքանչյուր բառում կատարվում է ուրիշ բառերի հետ կապակցվելու հնարավորության սահմանափակում, այսինքն առաջանում է որոշակի բառա-իմաստային տարբերակ: Այդ բանը կարելի է ցուցադրել հետևյալ պարզ օրինակով՝ զոռալ, մոնչալ, բառաչել, հաչել, մլավել և այլն, որոնցով կենդանիները բնութագրվում են ըստ իրենց ձայնային հատկանիշի: Պարզ է, որ մոնչում է առյուծը, բառաչում է կովը և այլն (իհարկե, միայն հայերենում. գերմաներենում, օրինակ, էշն ու առյուծը brüllen, արջը, ճանճն ու բզեզը՝ brümmen):

Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ լեզվի համար հատկանշական ու տարածված են ավելի բարդ դեպքերը, երբ միևնույն բառը մտնում է մի քանի բառա-իմաստային սիստեմների մեջ և, հետևաբար, նրանով անցնում է մի քանի իմաստային գիծ.

* * *

Այսպիսով, իմաստաբանական հետազոտությունը պետք է ելնի բառա-իմաստային տարբերակների զարգացումից, որոնք համախմբվում են անընդ-դրրկելի բազմազանությամբ ու հարստությամբ բնութագրվող բառա-իմաստային սիստեմների մեջ: Իսկ զանազան տիպի զուգորդությունները, բառիմաստի լայնացումներն ու նեղացումները պետք է դիտվեն որպես հոգեբա-

նական ու տրամաբանական պրոցեսների վրա հիմնված ինքնատիպ «տեխնիկական» միջոցներ, որոնց օգնությամբ իրականացվում է նոր բառա-իմաստային տարբերակների գոյացումը: Վերջիններիս զարգացման հիմքը, ինչպես տեսանք, կազմում են օբյեկտիվ իրականությունը, մտածողությունը և լեզվի սիստեմը:

Այս հարցերը խորը և բազմակողմանի ուսումնասիրության կարիք են դգում, որի համար պահանջվում է ընդլայնել իմաստաբանական հետազոտությունների շրջանակները, գոյություն ունեցող մեթոդներին զուգընթաց կիրառել նորերը: Ի դեպ, վերջին տարիներին փորձեր են արվում իմաստաբանական պրոբլեմները ևս լուծել մաթեմատիկական ճշգրիտ մեթոդներով, սակայն, մասնավորապես հայերենի բնագավառում, այդ մասին խոսելը դեռ վաղ է:

Э. С. ВАРДУМЯН

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ СЕМАСИОЛОГИИ

Р е з ю м е

Семасиология является наиболее сложной и наименее разработанной отраслью языкознания.

Ученые разных стран и времен подходили к ней с разных точек зрения, но у всех проявлялась общая тенденция лишь классифицировать изменения значений слов, а позднее — создать панхроническую всеобъемлющую семантику.

Как рассматривались проблемы семасиологии в советском языкознании? Было признано, что изменения значений слов, главным образом, являются следствием логических и психологических процессов, всевозможных ассоциаций. Однако последние охватывают далеко не все слова — основная часть лексики оказывается вне сферы исследования; остается не раскрытой и сама специфика смыслового развития слова.

Поэтому в последнее время возникла необходимость по-новому оценивать семантические процессы и явления, выявлять факторы, определяющие возникновение и характер лексического значения, устанавливать закономерности смыслового развития лексических единиц.

В статье подробно излагаются эти вопросы, указывается, что основой семасиологического исследования должны быть лексико-семантические варианты, отражающие все разнообразие и сложность семантического развития слова. Эти варианты, совокупность которых и составляет лексическое значение слова, объединяются в лексико-семантические системы, характеризующиеся необъятной широтой и многогранностью.

Указанные же логические и психологические моменты являются своеобразными техническими средствами, способствующими образованию лексико-семантических вариантов, основу развития которых составляют объективная действительность, мышление и система языка.

Эти вопросы нуждаются в глубоком и разностороннем освещении, поэтому помимо существующих методов и приемов необходимо использовать и новые, более совершенные, расширить рамки семасиологических исследований.